ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 20.1. Օրենքով սահմանված դեպքերում ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքի դրույքաչափերը

1. Ծանուցման ենթակա գործունեությամբ զբաղվելու իրավունք ձեռք բերելու համար պետական տուրքը գանձվում է հետևյալ դրույքաչափերով.

| | |
|---|---|
| 1) ***(կեպն ուժը կորցրել է 13.07.23 ՀՕ-258-Ն)*** | |
| 2) ***(կեպն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 3) ***(կեպն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 4) ***(կեպն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 5) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2207 ծածկագրին դասվող էթիլային սպիրտի և 2208 ծածկագրին (բացառությամբ սույն աղյուսակի 5.1-ին, 5.2-րդ, 5.3-րդ, 7-րդ և 7.1-ին կետերում նշված գործունեության տեսակների և մինչև 22 տոկոս սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների արտադրության) դասվող ապրանքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով |
| 5.1) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող կոնյակի և բրենդիի արտադրության և ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող կոնյակի և բրենդիի սպիրտների արտադրության և մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) իրացման իրավունք ձեռք բերելու համար<br><br>Արտադրողի կողմից 100 հազար լիտրից ավելի իրացված՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող կոնյակի և բրենդիի սպիրտների յուրաքանչյուր լիտրի (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) համար՝ լրացուցիչ | տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով<br><br>100 դրամ |

| | |
|---|---|
| 5.2) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող կոնյակի, բրենդիի, կոնյակի և բրենդիի սպիրտների արտադրության համար՝ առանց իրացման իրավունքի | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 5.3) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220830 ծածկագրին դասվող վիսկիների, 220840 ծածկագրին դասվող ռոմի, 220850 ծածկագրին դասվող ջինի, ինչպես նաև սպիրտային այլ թուրմերի (անիսոն, ապերատիվ, բալզամ, ռաքիա և այլն) և 22 տոկոսից ավելի սպիրտ պարունակող այլ սպիրտային խմիչքների (բացառությամբ խաղողի, պտղահատապտղային և մեղրի հումքից բացի այլ հումքով օղիների) արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 3000-ապատիկի չափով |
| 6) ***(կետն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 7) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող՝ միայն մեղրից, պտուղներից և հատապտուղներից (բացառությամբ՝ խաղողի) թորված 40 տոկոս և ավելի սպիրտ պարունակող ալկոհոլային խմիչքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 7.1) խաղողի օղիների և խաղողի օղու թորվածքների արտադրության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 8) ***(կետն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 9) ***(կետն ուժը կորցրել է 03.05.23 ՀՕ-164)*** | |
| 10) առևտրի իրականացման վայրի կազմակերպման իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ | |
| ա. Երևան քաղաքում | տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| բ. մարզկենտրոններում | տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| գ. Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս | տարեկան բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| 11) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2208 ծածկագրին դասվող օղու ներմուծում իրականացնելու իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 15000-ապատիկի չափով |
| 11.1) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 220820 ծածկագրին դասվող կոնյակի և բրենդիի և ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող մինչև 100 հազար լիտր (100-տոկոսանոց սպիրտի հաշվարկով) կոնյակի և բրենդիի սպիրտների՝ ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծման, այդ թվում՝ վերամշակման նպատակով ներմուծման իրավունք ձեռք բերելու համար<br><br>Ներմուծողի կողմից 100 հազար լիտրից ավելի՝ ԵԱՏՄ անդամ չհամարվող պետություններից «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծված, ինչպես նաև ԵԱՏՄ անդամ պետություններից ներմուծված, այդ թվում՝ վերամշակման նպատակով ներմուծված ԱՏԳ ԱԱ դասակարգչի 220820890 ծածկագրին դասվող արտադրանքի յուրաքանչյուր լիտրի համար՝ լրացուցիչ | տարեկան բազային տուրքի 10000-ապատիկի չափով<br><br>100 դրամ |
| 12) թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի հարգորոշման և հարգադրոշմման իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 13) գենետիկ ինժեներիայի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով: |
| 13) «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 710210000, 710221000, 710231000 ծածկագրերին դասվող՝ բնական՝ մշակված կամ | տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| չմշակված, բայց չշրջանակված կամ չամրակցված ալմաստների առք ու վաճառքի, ներմուծման, արտահանման, փոխադրման համար՝ | |
| 14) ստորերկրյա քաղցրահամ ջրերի օգտագործման նպատակով հորատման գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 15) ***(ենթակետն ուժը կորցրել է 03.06.19 ՀՕ-59-Ն)*** | |
| 16) ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար պահանջվող ջրօգտագործման և ջրահեռացման, ինչպես նաև թույլատրելի սահմանային արտահոսքի նորմաների հաշվարկման գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| 17) սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների կամ լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունների բաժնեմասերի հավատարմագրային կառավարման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |
| 18) փոխադրումների մենեջերների մասնագիտական<br>վերապատրաստման ծառայության մատուցման<br>համար՝ տարեկան | բազային տուրքի<br>100-ապատիկի չափով |
| 19) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային<br>տրանսպորտով միջպետական փոխադրումներ կատարող<br>վարորդների մասնագիտական վերապատրաստման<br>ծառայության մատուցման համար՝ տարեկան | բազային տուրքի<br>100-ապատիկի չափով |
| 20) էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրման ծառայության մատուցման իրավունք ձեռք բերելու համար | տարեկան բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| 21) | |
| ա | |
| բ | |
| 22) ֆիթնես կենտրոնի կամ մարզասրահի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ | |

| | |
|---|---|
| ա. Երևան քաղաքում | տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով |
| բ. մարզկենտրոններում | տարեկան բազային տուրքի 100-ապատիկի չափով |
| գ. Երևան քաղաքից և մարզկենտրոններից դուրս | տարեկան բազային տուրքի 50-ապատիկի չափով |

2. Բացառությամբ սույն օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին կետի 5-րդ, 5.1-ին, 5.2-րդ, 5.3-րդ, 7-րդ, 7.1-ին և 10-րդ ենթակետերում նշված ծանուցման ենթակա գործունեության տեսակների, մեկից ավելի յուրաքանչյուր վայրում ևս ծանուցման ենթակա նույն տեսակի գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար տարեկան տվյալ գործունեության իրականացման իրավունք ձեռք բերելու համար՝ սահմանված պետական տուրքի դրույքաչափի հիսուն տոկոսի չափով: